ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.06.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/238

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Սոլարա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Աբրահամյանի,

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.05.2022թ. թիվ 26/26-1/8879-2022 գրությամբ «Սոլարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 10.05.2022թ. 01/13644-22 գրության հիման վրա, 17.05.2022թ. թիվ 26/26-1/8879-2022 գրությամբ նախաձեռնել է «Սոլարա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սոլարա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/238 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022 ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/35» ծածկագրով պայմանագիրը կնքելուց հետո Ընկերության կողմից ուսումնասիրվել են կատարվելիք աշխատանքները և շինարարության ենթակա օբյեկտն ու պարզվել են, որ նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա են էական անհամապատասխանություններ, որի պայմաններում աշխատանքների իրականացման արդյունքում կարող էին առաջանալ լուրջ հետևանքներ, ինչի մասին տեղեկացվել են Պատվիրատուն, նախագծողը և տեխնիկական հսկիչ ու որոշում է կայացվել միանշանակ արդեն իսկ հաստատված նախագծով շինարարություն չիրականացնելու վերաբերյալ:

Միաժամանակ հայտնել է, որ վերոնշվածն ըստ էության հաստատել է նաև Պատվիրատուն՝ 07.06.2022թ. թիվ 61/32365-22 գրությամբ:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.05.2022թ. 01/13644-22 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/35» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՍՈԼԱՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) և գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ընտրված մասնակից:

Երևանի քաղաքապետարանի և Ընկերության միջև կնքվել է համապատասխան գնման պայմանագիր՝ առանց ֆինանսական միջոցների:

Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի փողոցի հ.1 ադմինիստրատիվ շենքի ֆոտովոլտալին համակարգի կառուցման աշխատանքների (1-ին չափաբաժնի) մասով ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, Պայմանագրի 8.15 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով Մասնակցին ներկայացվել է համաձայնագիր կնքելու, բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել նշված փաստաթղթերը՝ խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները:

Հաշվի առնելով, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 8.15 կետի, Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի փողոցի հ.1 ադմինիստրատիվ շենքի ֆոտովոլտալին համակարգի կառուցման աշխատանքների (1-ին չափաբաժնի) մասով միակողմանի լուծվել է կնքված պայմանագիրը:

Վերոգրյալով պայմանավորված և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի պահանջներով, առաջարկում եմ Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Կից Ձեզ են տրամադրվում համապատասխան փաստաթղթերի պատճենները»:

ՍՑ-ՆԳ-2022/238 ծածկագրով ընթացակարգի քննության շրջանակներում Պատվիրատուն 07.06.2022թ. թիվ 61/32365-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2022/238 ծածկագրով ընթացակարգի շրջանակում տեղեկացնում ենք, որ Երևանի քաղաքապետարանի և «ՍՈԼԱՐԱ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերության/ միջև 31.03.2022 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/35» ծածկագրով գնման պայմանագիր շրջանակներում Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի փողոցի հ.1 ադմինիստրատիվ շենքի ֆոտովոլտալին համակարգի կառուցման աշխատանքների (1-ին չափաբաժնի) մասով Ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 8.15 կետի, պատճառաբանելով, որ մշակված նախագծային փաստաթղթերում արտացոլված տեղեկատվությունը, իրականացված ուսումնասիրությունները չեն համապատասխանում իրականությանը:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետների մասնակցությամբ հրավիրվել են հանդիպումներ, որին ներկա են եղել շինանարարական աշխատանքների մրցույթում հաղթող ճանաչված ընկերության, տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության և նախագծող կազմակերպության ներկայացուցիչները, որի արդյունքում պարզ է դարձել, որ նախագծող կազմակերպության կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելիս տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք է կատարվել:

Խնդրում ենք հաշվի առնել վերոնշյալ հանգամանքը «Սոլարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի քննության ժամանակ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/238 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022 ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2022/238 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2022/238 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Սոլարա» ՍՊԸ-ի միջև 31.03.2022թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/35» ծածկագրով պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի քաղաքապետարանի Արգիշտի 1 հասցեի և Բուզանդի 1/3 հասցեի ադմինիստրատիվ շենքերի ֆոտովոլտալին համակարգի կառուցման աշխատանքների (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Պայմանագրի 8.15-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի

կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

3. Երևանի քաղաքապետարանի և «Սոլարա» ՍՊԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

4. Պատվիրատուն «Սոլարա» ՍՊԸ-ին ուղղված 02.05.2022թ. թիվ 01/11111-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ՍՈԼԱՐԱ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերության/ միջև 31.03.2022 թվականին կնքվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/35» ծածկագրով գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, առանց ֆինանսական միջոցների, որի շրջանակներում Ընկերությունը ներկայացրել է պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնության ձևով:

Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի փողոցի հ.1 ադմինիստրատիվ շենքի ֆոտովոլտալին համակարգի կառուցման աշխատանքների (1-ին չափաբաժնի) մասով ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո Պայմանագրի 8.15 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերությանը ներկայացվել է համաձայնագիր կնքելու, բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի

ներկայացվել նշված փաստաթղթերը՝ խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները:

Հաշվի առնելով, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 8.15 կետի, Երևանի քաղաքապետարանը հրաժարվում է կնքված պայմանագրի Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի փողոցի հ. 1 ադմինիստրատիվ շենքի ֆոտովոլտալին համակարգի կառուցման աշխատանքների մասով, համարելով այն լուծված:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 03.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

6. ՍՑ-ՆԳ-2022/238 ծածկագրով ընթացակարգի քննության շրջանակներում Պատվիրատուն 07.06.2022թ. թիվ 61/32365-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2022/238 ծածկագրով ընթացակարգի շրջանակում տեղեկացնում ենք, որ Երևանի քաղաքապետարանի և «ՍՈԼԱՐԱ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերության/ միջև 31.03.2022 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/35» ծածկագրով գնման պայմանագիր շրջանակներում Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի փողոցի հ.1 ադմինիստրատիվ շենքի ֆոտովոլտալին համակարգի կառուցման աշխատանքների (1-ին չափաբաժնի) մասով Ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 8.15 կետի, պատճառաբանելով, որ մշակված նախագծային փաստաթղթերում արտացոլված տեղեկատվությունը, իրականացված ուսումնասիրությունները չեն համապատասխանում իրականությանը:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետների մասնակցությամբ հրավիրվել են հանդիպումներ, որին ներկա են եղել շինանարարական աշխատանքների մրցույթում հաղթող ճանաչված ընկերության, տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության և նախագծող կազմակերպության ներկայացուցիչները, որի արդյունքում պարզ է դարձել, որ նախագծող կազմակերպության կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելիս տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք է կատարվել:

Խնդրում ենք հաշվի առնել վերոնշյալ հանգամանքը «Սոլարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի քննության ժամանակ»:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.05.2022թ. թիվ 26/26-1/8879-2022 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 10.05.2022թ. 01/13644-22 և 07.06.2022թ. թիվ 61/32365-22 գրությունները և կից փաստաթղթերը, Ընկերության դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «Սոլարա» ՍՊԸ-ի միջև 31.03.2022թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/35» ծածկագրով պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի քաղաքապետարանի Արգիշտի 1 հասցեի և Բուզանդի 1/3 հասցեի ադմինիստրատիվ շենքերի ֆոտովոլտալին համակարգի կառուցման աշխատանքների, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 8.15-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի

կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Երևանի քաղաքապետարանի և «Սոլարա» ՍՊԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

Պատվիրատուն «Սոլարա» ՍՊԸ-ին ուղղված 02.05.2022թ. թիվ 01/11111-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ՍՈԼԱՐԱ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերության/ միջև 31.03.2022 թվականին կնքվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/35» ծածկագրով գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, առանց ֆինանսական միջոցների, որի շրջանակներում Ընկերությունը ներկայացրել է պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնության ձևով:

Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի փողոցի հ.1 ադմինիստրատիվ շենքի ֆոտովոլտալին համակարգի կառուցման աշխատանքների (1-ին չափաբաժնի) մասով ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո Պայմանագրի 8.15 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերությանը ներկայացվել է համաձայնագիր կնքելու, բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել նշված փաստաթղթերը՝ խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները:

Հաշվի առնելով, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 8.15 կետի, Երևանի քաղաքապետարանը հրաժարվում է կնքված պայմանագրի Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի փողոցի հ. 1 ադմինիստրատիվ շենքի ֆոտովոլտալին համակարգի կառուցման աշխատանքների մասով, համարելով այն լուծված:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 03.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:</u>

ՍՑ-ՆԳ-2022/238 ծածկագրով ընթացակարգի քննության շրջանակներում Պատվիրատուն 07.06.2022թ. թիվ 61/32365-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2022/238 ծածկագրով ընթացակարգի շրջանակում տեղեկացնում ենք, որ Երևանի քաղաքապետարանի և «ՍՈԼԱՐԱ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերության/ միջև 31.03.2022 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/35» ծածկագրով գնման պայմանագիր շրջանակներում Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի փողոցի հ.1 ադմինիստրատիվ շենքի ֆոտովոլտալին համակարգի կառուցման աշխատանքների (1-ին չափաբաժնի) մասով Ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 8.15 կետի, պատճառաբանելով, որ մշակված նախագծային փաստաթղթերում արտացոլված տեղեկատվությունը, իրականացված ուսումնասիրությունները չեն համապատասխանում իրականությանը:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետների մասնակցությամբ հրավիրվել են հանդիպումներ, որին ներկա են եղել շինանարարական աշխատանքների մրցույթում հաղթող ճանաչված ընկերության, տեխնիկական

հսկողություն իրականացնող ընկերության և նախագծող կազմակերպության ներկայացուցիչները, որի արդյունքում պարզ է դարձել, որ նախագծող կազմակերպության կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելիս տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք է կատարվել:

Խնդրում ենք հաշվի առնել վերոնշյալ հանգամանքը «Սոլարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի քննության ժամանակ»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ և նախաձեռնված ընթացակարգի քննության շրջանակներում Պատվիրատուի 07.06.2022թ. թիվ 61/32365-22 գրությամբ, ինչպես նաև Ընկերության դիրքորոշմամբ ներկայացված փաստական հանգամանքների համադրմամբ, արձանագրում եմ, որ «Սոլարա» ՍՊԸ-ն ըստ էության չի խախտել իր և Երևանի քաղաքապետարանի միջև 31.03.2022թ. կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/35» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, քանի որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետների հավաստմամբ նախագծող կազմակերպության կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելիս տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք է կատարվել, որպիսի պայմաններում արձանագրում եմ, որ Պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից իրականացրած գործողությունները համարժեք են ստեղծված իրավիճակին, հետևաբար գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Սոլարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.05.2022թ. թիվ 26/26-1/8879-2022 գրությամբ «Սոլարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**